



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՔԱՐՈՉԷ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ**  
**ՄԷՋ ԵՒ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ «ԲԱԴՐԱՄԵԱՆ»**  
**ՍՐԱՅԻ ԲԱՑՈՒՄԸ**

Կիրակի, 6 Ապրիլին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան պիտի նախագահե Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին, եւ պիտի փոխանցէ իր պատգամը:

Յաւարտ Ս. Պատարագի Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ վերանորոգուած «Բադրամեան» սրահի եւ «Թիւֆէնքճեան» նախասրահի բացումը, որ կազմակերպուած է Ս. Խաչ Մայր Տաճարի Հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ:

Բացման հանդիսութեան ներկայ պիտի ըլլան Միաբան Հայրերը եւ Ազգային Վարչութեան անդամներ:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY**  
**AND THE REOPENING OF BAGRAMIAN HALL**  
**AT HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO**

On Sunday, April 6<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello and deliver the sermon.

Following Divine Liturgy the Prelate will conduct the opening of the newly renovated "Bagramian" Hall and "Tufenkjian" Foyer and preside over the reception which has been organized by the parish Board of Trustees and Ladies Auxiliary.

**ԹԱՐԻՉԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՀԱՆԴԻՊՄԱՆ Գ. ԶԵՆՆԱՐԿ**

Շաբաթ, Ապրիլ 5-ի երեկոյեան, Կլենտէյլի «Civic Auditorium» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ թաւրիգահայութեան վերահանդիպման երրորդ ձեռնարկը՝ «Ջան Թաւրիգ» անուան տակ:

Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահե ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր բարեմաղթութիւնները: Սրբազան Հօր պիտի ընկերանան Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ երեք հոգեւոր հովիւները:

## **ANNUAL REUNION AND BANQUET OF TAVRIZ ARMENIANS**

On the evening of Saturday, April 5<sup>th</sup>, the annual reunion and banquet of Iran's Tavriz Armenians will take place under the heading "Jan Tavriz" at the Civic Auditorium in Glendale.

The Prelate will preside over the banquet and will offer the invocation as well as convey his blessings to the organization. The pastors of St. Mary's Church will accompany the Prelate.

### **«ԱՐԻՆԻ ՃԱՄՐՈՎ» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

Կիրակի, 6 Ապրիլի կեսօրէ ետք ժամը 3ին, Լոս Անճելըսի Քեսապի Մշակութային Կեդրոնի սրահին մէջ տեղի պիտի ունենայ գիրքերու ներկայացման ձեռնարկ մը, որուն Առաջնորդ Սրբազան Զօր անունով ներկայ պիտի ըլլայ Ս. Նահատակաց եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քիւնյ. Խաչատուրեան: Ձեռնարկը կազմակերպուած է Քեսապի Ուսումնասիրաց Միութեան ու Զամագգայինի Պարոյր Սեւակ մասնաճիւղին կողմէ:

Նորթրիճ համալսարանի հայագիտական բաժանմունքի վարիչ Փրոֆ. Վահրամ Շեմմասեան պիտի ներկայացնէ Շահեն Տերտերեանի «Արինի Ճամբով ՎՆ Death March» գիրքը, հրատարակութիւն՝ «Ցեղասպանութեան մատենաշար»ի, թիւ 3: Մատենաշարին հիմնադիրն է Յակոբ եւ Քնար Մանճիկեան ամուլը:

Նոյն ձեռնարկին ընթացքին, Տիկին Անահիտ Մեյմարեան պիտի ներկայացնէ մատենաշարի հիմնադիրներէն՝ Քնար Մանճիկեանի «Պատմութեան համար» եւ «Տօներ» հատորները:

### **PRESENTATION OF THE GENOCIDE MEMOIR “DEATH MARCH”**

The Kessab Educational Association and the Hamazkayin Barouyr Sevag chapter have organized a presentation of the English translation of the memoir "Death March" by Shahen Derderian, to take place at the Kessab Cultural Center in Reseda on Sunday, April 6<sup>th</sup>, at 3:00 p.m.

The book, the third in the Genocide Library series of publishers Hagop and Knar Mankijian, will be presented by Prof. Vahram Shemmassian, director of the Armenian Studies Department at CSUN. During the event, there will also be a presentation of Knar Manjikian's books by Mrs. Anahid Meymarian.

Rev. Fr. Razmig Khatchadourian will represent the Prelate at the event.

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ «THE PRESENCE OF THE PAST» ՀԱՏՈՐԻՆ

Կիրակի, 6 Ապրիլին երեկոյեան ժամը 6-ին, Կլենտոյի Նազովրեցի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Մաշտոց Գոլէճի տնօրէն՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի «The Presence of the Past» գիրքին ներկայացումը:

Հատորը կը բովանդակէ հեղինակին Պատմական Հայաստան ուխտագնացութիւններուն տպաւորութիւնները:

Բանախօսն է Հարաւային Բալիֆորնիոյ համալսարանի քաղաքական գիտութեանց ուսմանց հիմնարկի տնօրէն՝ Փրոֆ. Հրայր Տօքսմէճեան: Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, գիրքի ողջունահանդէսին ներկայ պիտի ըլլայ Արժ. Տ. Նարեկ Բինյ. Փեղիվանեան:

### PRESENTATION OF “THE PRESENCE OF THE PAST” DR. GARBIS DER YEGHIAYAN

On Sunday, April 6<sup>th</sup>, the presentation of Dr. Garbis Der Yeghiayan’s newly published book “The Presence of the Past” will take place at the Church of the Nazarene in Glendale, at 6:00 p.m. Dr. Hrair Dekmejian, Professor of Political Science at the University of Southern California, is the keynote speaker.

Rev. Fr. Nareg Pehlivanian will represent the Prelate.

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, 30 Մարտին, Frazier Park-ի մէջ, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Թաքոյա բանակավայրին պաշտօնական բացումը, ձեռամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Սրբազան Հօր կ’ընկերանային Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեանն ու Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան:



Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ Բանակավայրի Յանձնախումբին կողմէ նախաձեռնուած եւ կազմակերպուած սոյն ծրագրին, Կիրակի կեսօրին Առաջնորդ

Սրբազանն ու հոգեւոր հայրերը յատուկ արարողութեամբ մը կատարեցին ջուրի, աղ ու հացի եւ բանակավայրի օրհնութիւն, ժապաւենի հատում, բանակավայրի նշանակի բացում եւ առաջին ծառատնկումի արարողութիւն:

Կատարուեցաւ դրօշակի արարողութիւն. խօսք առին Հ.Մ.Ը.Մ.-ի պատասխանատուներ: Փակման խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը եւ փոխանցեց իր օրհնութիւններն ու յաջողութեան մաղթանքները: Ներկաները նաեւ առիթ ունեցան բանակավայրին ծանօթանալու:

## **PRELATE CONDUCTS OPENING OF HOMENETMEN CAMP TECUYA**

On Sunday, March 30, the Prelate conducted the official opening of Homenetmen's new camp, Camp Tecuya, in Frazier Park. The Prelate was accompanied by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian. The ceremony was organized by Homenetmen Regional Executive and the Camp Committee.

The ceremony began with the blessing of water, salt, and bread, by the Prelate and clergy, followed by the blessing of the campground. The Prelate then presided over the ribbon-cutting, unveiling of the logo, and the planting of the first tree.

Remarks were offered by the Homenetmen executives, followed by closing remarks by the Prelate who conveyed his blessings and well wishes to the organization and their future endeavors.

## **ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՉԱՏԿԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ**

Կիրակնօրեայ վարժարաններու Կեդրոնական Մարմինը Մարտ 30-ին կազմակերպած էր յարգանքի երեկոյ մը, որ տեղի ունեցաւ Հոլիվուտի Ս. կարապետ Մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ:

Հաւաքոյթին, գնահատանքի արժանացան Կիրակնօրեայ վարժարանի ուսուցիչներն ու ուսուցչուհիները, որոնք սիրայօժար աշխատանք կը տանին: Ներկայ էին Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի գոյգ պատասխանատուները եւ Ծնող-Օժանդակ Մարմինի անդամները:

Գնահատանքի խօսք փոխանցեց Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոնական Մարմնի ատենապետը՝ Տիար Յակոբ Զաղացպանեան. հաւկթախաղին իմաստը բացատրեց Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան, սրտի խօսք արտասանեցին Կիրակնօրեայ վարժարաններու տեսուչներ: Երգուեցան հոգեւոր երգեր: Կատարուեցաւ հաւկթախաղի մրցոյթ. յաղթական պատանին արժանացաւ նուէրի մը:

## **SUNDAY SCHOOLS' EASTER CELEBRATION**

On the afternoon of Sunday, March 30<sup>th</sup>, the Sunday School Directorate had organized an Easter celebration at "Karapetian" Hall of St. Garabed Church in Hollywood, during which they also had the opportunity to thank Sunday School teachers and commend them for their service. Christian Education Department Co-Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Sunday School teachers, parents, and students participated in the celebration.

Remarks were delivered by Sunday School Directorate Chairman Mr. Hagop Tchaghatsbanian who expressed his appreciation to the teachers,

followed by an explanation of Easter traditions by Very Rev. Fr. Barthe Gulumian. Spiritual songs were also sung during the luncheon.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԽՈՐԷ Հ.Ո.Հ.Ա.  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ «ԷՍՔԻՃԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՊՐԻԼԵԱՆ  
ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ**

Արարատ Տան «Էսքիճեան Թանգարան»ն ու Հայկական Ուսումնասիրութիւններու եւ Հետազոտութիւններու Ազգային Ընկերակցութիւնը կազմակերպած են դասախօսական երեկոյ մը, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 8 Ապրիլի երեկոյեան ժամը 7:30-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ: Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հայոց Ցեղասպանութեան թանգարանի եւ հնագիտութեան ու ազգագրութեան հիմնարկի գիտաշխատող Փրոֆ. Վերժինէ Սվազլեան պիտի ներկայացնէ Ականատես Վերապրողներու Վկայութիւններու հատորը եւ Հայոց Ցեղասպանութեան մասին անժխտելի պատմական փաստաթուղթեր:

Փրոֆ. Վերժինէ Սվազլեան աւելի քան 50 տարիներու ընթացքին արձանագրած եւ կորուստէ փրկած է Արեւմտեան Հայաստանէն բռնի տարագրուած հայութեան բանաւոր աւանդութեանց նշխարները: Ան իր հետազոտութիւնները ներկայացուցած է աշխարհի տարբեր երկիրներու մէջ, գիտաժողովներու ընթացքին, բազմալեզու յօդուածներով ու գիրքերով:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

**LECTURE ON GENOCIDE SURVIVOR TESTIMONIES  
UNDER THE AUSPICES OF THE PRELATE**

The Ararat-Eskijian Museum and the National Association for Armenian Studies and Research have organized a lecture to take place on Tuesday, April 8<sup>th</sup>, at 7:30 p.m., at the “Armenag Der Bedrosian” Hall of St. Mary’s Church in Glendale. The event is taking place under the auspices of the Prelate.

Prof. Dr. Verjine Svazlian, leading researcher at the Museum-Institute of the Armenian Genocide and Institute of Archeology and Ethnography, and the National Academy of Sciences in Armenia will lecture on the topic “Testimonies of the Eyewitness Survivors: Irrefutable Historical Documents of the Armenian Genocide.”

The Prelate will attend the lecture and convey his blessings.